



ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**ԹԱԹԻԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ  
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Արդի աշխարհում դժվար է գերազնահատել տնտեսական դիվանագիտության դերը: Դա առկա է ինչպես հանրային կյանքի փառքեր ոլորտներում, այնպես էլ պետությունների միջև տնտեսական հարաբերություններում: Առանձնահատուկ կարևորվում է տնտեսական դիվանագիտության նշանակությունը ցանկացած պետության ներքին տնտեսական հարաբերություններում և հանրային կյանքում՝ երկրում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների, դեսպանատների տնտեսական կցորդների և բաժինների, օտարերկրյա ընկերությունների, ներդրողների, ինչպես նաև արտահանման որոշակի ուղղվածություն ունեցող տեղական ընկերությունների հետ կապերում: Այնուհանդերձ, դա պետք է դիտարկել հիմնականում որպես արտաքին տնտեսական հարաբերությունները զարգացնելու առանցքային գործիք: Գործնականում տնտեսական դիվանագիտության գլխավոր նպատակը երկրի տնտեսության մրցունակության բարելավումն ու դրա ըստ արժանվույն մատուցումն է ներքին շուկայում և արտերկրում: Պատմական Հայաստանի նշանավոր մտածողներն իրենց կենսափորձով և սրտեղծագործություններով շրջափելի ներդրում են ունեցել ինչպես ժամանակի, այնպես էլ ներկայիս միջպետական հարաբերությունների, մասնավորապես՝ տնտեսական դիվանագիտության բազմաձախ և ընդգրկուն արվեստի որոշ հիմնադրույթների մշակման գործում: Նրանց թողած գրական ժառանգությունն օգնել է փառքեր ժողովուրդների միջև տնտեսական, իրավական և քաղաքական արդյունավետ կապերի ձևավորման և դրանց զարգացման գործընթացներում: Հետևաբար՝ տնտեսական դիվանագիտության պատմական էվոլյուցիայի ուսումնասիրությունը կարող է նպաստել համաշխարհային տնտեսության ներսում առկա գործընթացների առավել ամբողջական ընկալմանը, իրավիճակի սթափ գնահատականի ձևավորմանը, ինչպես նաև փոխշահավետ հարաբերությունների կայացմանը:

**Հիմնաբառեր.** *տնտեսական դիվանագիտություն, պատմական Հայաստան, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Գոշ, Հովհաննես Երզնկացի*

JEL: B31, N01

DOI: 10.52174/1829-0280\_2021\_2\_166

**Ներածություն:** Դինամիկ զարգացող և հարափոփոխ միտումներով բնութագրվող ժամանակակից աշխարհում աստիճանաբար մեծանում է տնտեսական դիվանագիտության դերը: Անկախ նրանից, թե որքանով ենք կարևորում դրա նշանակությունը, որքանով ենք ճիշտ ընկալում դրա էությունը, վերջապես՝ որքանով ենք տիրապետում դրա գործիքակազմին, տնտեսական դիվանագիտությունը գրեթե ամենուր է՝ սկսած մեզ շրջապատող ներքին միջավայրից և վերջացրած՝ գլոբալ տնտեսությամբ<sup>1</sup>: Թեև տնտեսական դիվանագիտությունն ընկալվում է որպես պետության արտաքին տնտեսական հարաբերությունները զարգացնելու գործիք, այնուամենայնիվ, այն որոշակի դեր ունի նաև երկրի ներսում՝ հավատարմագրված միջազգային կազմակերպությունների, դեսպանատների տնտեսական կցորդների և բաժինների, օտարերկրյա ընկերությունների, ներդրողների, ինչպես նաև արտահանման որոշակի ուղղվածություն ունեցող տեղական ընկերությունների հետ համակարգված և հետևողական աշխատանքներում: Ինչպես արտաքին ասպարեզում, այնպես էլ երկրի ներսում ծավալվող տնտեսական դիվանագիտության գերակա նպատակը երկրի տնտեսության մրցունակության բարձրացումն ու դրա պատշաճ ներկայացումն է տեղական և արտաքին շուկաներում:

**Գրականության ակնարկ:** Տնտեսական դիվանագիտությունը հանրությանը ներկայացվում է որպես դիվանագիտության համեմատաբար նոր ուղղություն: Դրա պատճառներից մեկն այն է, որ թեմային առնչվող մասնագիտական գրականության հիմնական աղբյուրները՝ հատկապես գործնական ուղղվածություն ունեցող վերլուծությունները, ընթերցողի սեղանին են դրվել քսաներորդ դարի ընթացքում: Մասնավորապես՝ հիշյալ ուղղությունն ավելի մեծ զարգացում է ստացել Բայնեի, Վուլկոքի<sup>2</sup>, Բերիջի<sup>3</sup>, Օդելի<sup>4</sup>, Սաների<sup>5</sup> աշխատություններում՝ պայմանավորված քաղաքական և տնտեսական գլոբալացման արագ զարգացող միտումներով և դրանցից բխող բազմաթիվ գործընթացներով: Տնտեսական դիվանագիտությանն առնչվող խնդիրների հետաքրքիր վերլուծություններ, այնուամենայնիվ, հանդիպում են նաև ավելի վաղ շրջանի մտածողների աշխատություններում<sup>6</sup>, որոնք վկայում են այն մա-

<sup>1</sup> Տե՛ս Conceptualizing Economic Diplomacy: The Crossroads of International Relations, Economics, IPE and Diplomatic Studies Maaikje Okano-Heijmans Netherlands Institute for International Relations "Clingendael", The Hague, 9 September 2010; revised: 16 February 2011; accepted: 17 February 2011, էջ 7-36:

<sup>2</sup> Տե՛ս Bayne N., Woolcock S., The new economic diplomacy: decision-making and negotiations in International Economic Relations, Ashgate Publishing Limited, 2007:

<sup>3</sup> Տե՛ս Berridge G., Diplomacy: theory and practice, Palgrave Macmillan, 2002:

<sup>4</sup> Տե՛ս Odell J., Negotiating the World Economy, Cornell University Press, 2000:

<sup>5</sup> Saner R., Yiu L., International Economic Diplomacy: Mutations in Post-modern Times, Netherlands Institute of International Relations "Clingendael", 2007:

<sup>6</sup> Տե՛ս Carron de la Carrière G., La diplomatie économique – Le diplomate et le marché, Economica, Paris, 1998: Melissen J. (ed.), Innovation in Diplomatic Practice, Macmillian, London, 1999:

սին, որ դրանք կարևոր նշանակություն են ունեցել նաև պատմության տարբեր ժամանակահատվածներում, հիմնականում՝ տարբեր երկրների արտաքին տնտեսական հարաբերությունների ավելի արդյունավետ գործիքների ընտրության ժամանակ:

Սույն հոդվածի նպատակը պատմական Հայաստանի տնտեսական դիվանագիտության հիմքերի ուսումնասիրությունն է, հայ մտածողների աշխատություններում դրանց առնչվող փաստերի, երևույթների և մեկնաբանությունների վերլուծությունը, ինչպես նաև արդի աշխարհում կիրառվող տնտեսական դիվանագիտության գործիքակազմի հետ կապի բացահայտումը, ինչը կարող է ավելի հարստացնել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական համակարգում տնտեսությանը վերաբերող մասնագիտական կարողություններն ու հմտությունները: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ տնտեսական դիվանագիտության հիմքերը պատմական Հայաստանում ձևավորվել են շատ ավելի վաղ: Դրանց մասին վկայությունները հանդիպում են հայ մտածողների բազմաթիվ աշխատություններում՝ սկսած Դավիթ Անհաղթից, Գրիգոր Մագիստրոսից և վերջացրած Մխիթար Գոշով ու Հովհաննես Երզնկացիով, որոնց ստեղծագործություններում առավել կանոնակարգված են ներկայացվում ինչպես տնտեսական դիվանագիտության բուն էությունը, այնպես էլ դրա կիրառման մասնագիտական կարևոր մանրամասներ: Մասնավորապես՝ Դավիթ Անհաղթի կյանքի առավել կարևոր դրվագներին, այդ թվում՝ պատմական Հայաստանի, Հին Հունաստանի փիլիսոփայական դպրոցներում նրա դերի, մանկավարժական, եկեղեցական գործունեությանն ու աշխարհիկ հայացքներին են անդրադարձել Ս. Արևշատյանը<sup>7</sup>, Վ. Չալոյանը<sup>8</sup>, Գ. Բրուսյանը<sup>9</sup>, Հայաստանի և արտերկրի այլ հեղինակներ: Մեծ է պատմաբանների և փիլիսոփաների հետաքրքրությունը նաև Գրիգոր Մագիստրոսի թողած գրական ժառանգության և կենսագրության հանդեպ: Նրա կենսափիլիսոփայությունն ու ազնվական ծագումը, ինչպես նաև տնտեսության, մշակույթի, պետության և վերնախավի դերին, ազգային խնդիրների հանգուցալուծմանն են նվիրված Կ. Մաթևոսյանի<sup>10</sup>, Գ. Մուրադյանի<sup>11</sup>, Հ. Բարթիկյանի<sup>12</sup>, Ա. Սանջանի, Ա. Տերյանի<sup>13</sup> և այլոց ստեղծագործությունները:

Momaya K., Evaluating International Competitiveness at the Industry Level, *Vikalpa*, vol. 23, no. 2, 1998: Olins W., *Trading Identities: Why Countries and Companies are Taking on Each Others' Roles*, Foreign Policy Centre, London, 1999: Putnam R., *Diplomacy and Domestic Politics: The Logic of Two-Level Games*, "International Organization", vol. 42, no. 3, 1998, էջ 427-460:

<sup>7</sup> Տե՛ս Արևշատյան Ս., Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, «Հայաստան» հրատ., Եր., 1980:

<sup>8</sup> Տե՛ս Չալոյան Վ., *Философия Давида Непобедимого*, Եր., 1946:

<sup>9</sup> Տե՛ս Բրուսյան Գ., Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին, Եր., 1980:

<sup>10</sup> Տե՛ս Մաթևոսյան Կ., Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր., Մուղնի, 2015:

<sup>11</sup> Տե՛ս Մուրադյան Գ., Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը և կյանքը, «Բանբեր Մատենադարանի», հ. 20, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստ., Եր., «Նաիրի» հրատ., 2014, էջ 5-44:

<sup>12</sup> Տե՛ս Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դարերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, N 1, էջ 17-29, N 2, էջ 15-25: Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, հատոր առաջին, Եր., 2002, էջ 655-667, 668-678:

<sup>13</sup> Տե՛ս Sanjian A., Terian A., An Enigmatic Letter of Grigor Magistros, *Journal of The Society of The Armenian Studies*, 2, 1985-1986, էջ 85-95:

Ինչ վերաբերում է Մխիթար Գոշին, ապա նա պատմական Հայաստանի այն բացառիկ մտածողներից է, ում կյանքի և ստեղծագործության հանդեպ հավասարապես մեծ է ինչպես հայ, այնպես էլ օտար հետազոտողների հետաքրքրությունը<sup>14</sup>: Սա բացատրվում է այն իրողությամբ, որ Մ. Գոշի հեղինակած միայն մեկ ստեղծագործությունը՝ «Դատաստանագիրքը», ոչ միայն թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, այլև դրա հիման վրա են ձևավորվել ժամանակակից տարբեր պետությունների, այդ թվում՝ եվրոպական երկրների օրենքներն ու վարքականոնները:

Մինչ օրս մասնագիտական ուսումնասիրությունների առարկա է հայ մեծանուն մտածող Հովհաննես Երզնկացու կյանքն ու գործը<sup>15</sup>: Նրա իմաստասիրությանն ու գրական հարուստ ժառանգությանը, ինչպես նաև տնտեսական դիվանագիտության հիմնադրույթների ձևավորման գործընթացում ունեցած արժեքավոր դերակատարությանն են առնչվում Ա. Սրապյանի, Ս. Զաքարյանի, Ա. Մանուկյանի, Է. Բաղդասարյանի և այլ հեղինակների մենագրությունները<sup>16</sup>:

Ելնելով վերը նշվածից՝ ուսումնասիրության ընթացքում կներկայացնենք չորս հայ մտածողների աշխատություններում արծարծված հիմնախնդիրները, որոնց զուգահեռ անդրադարձ կարվի նաև առանձին հիմնադրույթների գործնական կիրառության հարցերին:

Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել հայ հեղինակների, պատմիչների և նրանց աշխատությունների վերաբերյալ արդի հայ և օտարերկրյա հեղինակների բազմաթիվ աշխատություններ:

**Մերձդարձություն:** Ժամանակակից տնտեսական դիվանագիտության ուսումնասիրությունը պահանջում է ներթափանցել ուսումնասիրվող առարկաների և երևույթների էության մեջ: Սա հնարավոր է այն պայմաններում, երբ դա վերլուծության է ենթարկվում իր ծագման և զարգացման ամբողջության մեջ, այսինքն՝ ցուցաբերվում է պատմական մոտեցում: Այս առումով, պատմական Հայաստանի մտածողների աշխատությունները վերլուծության հարուստ հիմք են տրամադրում, քանի որ գիտական նոր արդյունքները և անցյալի փորձն ու գիտելիքները մշտապես դիալեկտիկական փոխազ-

<sup>14</sup> Տե՛ս Dowsett C.J.F., The Albanian Chronicle of Maxit'ar Goš,- Bulletin of the School of Oriental and African Studies. Vol. 21. Issue 03 / October 1958, էջ 472-490; Армянский судебник Мхитара Гоша (перевод А. Паповяна), Изд-во Академии наук Армянской ССР, 1954; Mkhitar Gosh, The Lawcode (Datastanagirak') of Mxit'ar Goš, Translated by Robert W. Thomson, Rodopi, 2000. Кыпчакско-польская версия Армянского Судебника и Армяно-кыпчакский Процессуальный кодекс 1519-1594 гг. / Составители А.Н.Гаркавец, Г.Сапаргалиев.- Алматы: Дешт-и-Кыпчак, Баур, 2003. **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, թարգմ. Մաքսիմ Ոսկանյանի, Եր., 2001; Mkhitar Gosh's Fables. Transl. R. Bedrosian, 2002:

<sup>15</sup> Տե՛ս **Երզնկացի Յովհաննէս**, Ճառեր եւ քարոզներ / Յ. Երզնկացի, Աշխատասիրությամբ Է. Բաղդասարյանի, Եր., 2013:

<sup>16</sup> Տե՛ս **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, Եր., 2013: **Սրապյան Ա.**, Հովհաննես Երզնկացի: Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Եր., ԵՊՀ հրատարակչություն, էջ 330-339: **Մանուկյան Ա.**, **Մանուկյան Մ.**, Դաստիարակչական մտքերի հայկական գանձարան, «Զանգակ-97», էջ 33: **Զաքարյան Ս.**, Հայ իմաստասերներ (Վահրամ Բարունի, Հովհաննես Պլուզ Երզնկացի), Եր., 1997, էջ 68-75: **Аквинский Ф.**, О правлении государей / Политические структуры эпохи феодализма в Западной Европе VI-XVII вв., Л., 1990, էջ 242: Copleston F. C. Aquinas, An introduction to the life and work of the great medieval thinker. London, 1955, էջ 240-242: **Զաքարյան Ս.**, Հովհաննես Պլուզ Երզնկացին իշխանության և կառավարման մասին, «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», № 1 (19), 2016:

դեցության մեջ են և առավել արդյունավետ ու ուսանելի՝ պատմության տարբեր փուլերից անցնում են ներկային՝ նրան հաղորդելով յուրահատուկ կենսունակություն և արդիականություն: Ինչպես Դավիթ Անհաղթի և ներկայիս ուսումնասիրության մեջ արժարժվող այլ հեղինակների, այնպես էլ Սմբատ Սպարապետի, Գրիգոր Տաթևացու և այլոց թողած ժառանգությունն այս ասպարեզում վերածնվում է գիտական նոր հիմքերի վրա և նոր շունչ ստանում՝ հաշվի առնելով ներկայիս դինամիկ զարգացումներն ու ազգային առանձնահատկությունները:

Մյուս կողմից՝ ինչպես գիտության տարբեր ասպարեզներում տարվող հետազոտական աշխատանքների պարագայում, տնտեսական դիվանագիտության պատմական հիմքերի ուսումնասիրությունը պահանջում է նաև գիտական վերացարկումներ, ինչն, իր հերթին, հենվում է տնտեսագիտության նվաճումների վրա՝ համարվելով գիտական հետազոտության կարևոր գործոն: Միաժամանակ, պատմական երևույթներով պայմանավորված, կարևորվում է տնտեսության և դրա առանձին կողմերի չափելիությունը, որի օգնությամբ փորձել ենք ներկայացնել ուսումնասիրվող օբյեկտի կամ երևույթի հարաբերակցությունն արդեն հայտնիի հետ: Հետևաբար՝ աշխատել ենք նաև բացահայտել հնարավոր օբյեկտի կամ երևույթի պատճառական կապերն ուսումնասիրվող երևույթների, փաստերի և իրադարձությունների միջև:

Տնտեսական դիվանագիտությանն առնչվող մեր հետազոտություններում հիմնական եզրահանգումները հենվում են պատմական իրողությունների, փոփոխվող աշխարհի դիտարկումների վրա, իսկ ընդհանրացումների հիմքում իրական փաստեր, իրադարձություններ և երևույթներ են: Գիտական խնդիրների արդյունավետ լուծումները պահանջում են նոր, ոչ ստանդարտ, գիտական ճկուն մոտեցումներ, որոնց շնորհիվ էլ բացահայտվում են հանրային կյանքին վերաբերող բազմաթիվ օրինաչափություններ:

Տնտեսական դիվանագիտության պատմական հիմքերի վերլուծությունը գիտական կանխատեսման հնարավորություն է ընձեռում:

Օգտագործել ենք պատմական իրողությունների մասնագիտական ուսումնասիրությունների, ինչպես նաև վեր հանված երևույթների ու միտումների համեմատական վերլուծության, դրանց գիտական ընդհանրացումների և այլ մեթոդներ, որոնց օգնությամբ հնարավոր է դարձել գնահատել տնտեսական դիվանագիտությանն առնչվող պատմական հիմքերը:

**Վերլուծություն:** Ժամանակակից տնտեսական դիվանագիտությունն ավելի շատ է կիրառում ինչպես շահադրման, այնպես էլ տնտեսական արդարության սկզբունքներն ու վիճակագրական ցուցանիշները և հիմնավոր փաստարկները: Հայոց պետականության համար բախտորոշ 5-6-րդ դարերում հենց այս մոտեցումներով է առաջնորդվել Դավիթ Ներգինացին (Դավիթ Արմենիոսը), ում հռչակեցին Դավիթ Անհաղթ՝ շնորհիվ հանրային և մասնագիտական շրջանակներում փիլիսոփայական վեճերում իր փաստարկված տեսակետներով ձեռք բերած շարունակական հաղթանակների<sup>17</sup>:

<sup>17</sup> Տե՛ս Hacıyan A., The heritage of Armenian Literature. Detroit: Wayne State Univ. Press, 2001, էջ 7-32:

Ուսումնասիրելով Դավիթ Անհաղթի կյանքն ու թողած գրական ժառանգությունը<sup>18</sup> կարելի է եզրակացնել, որ նա պատմական իրողությունների հորձանուտում, այլ երկրների հետ բարդ ու բազմաշերտ հարաբերություններում պետության դերակատարության և տնտեսության զարգացման առումով տվյալ ժամանակաշրջանի դիվանագիտության, այդ թվում՝ տնտեսական դիվանագիտության էությունը դիտարկել է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարթություններում: Նրա ընկալմամբ՝ առանձնահատուկ վերաբերմունք են պահանջում ոչ միայն ամեն պետության հետ ձևավորվող, զարգացող կամ փակուղում հայտնված, այլև սեփական երկրում տարբեր սոցիալական շերտերի հետ հանրային հարաբերությունները, ինչպես նաև սեփականատիրական հարաբերությունների բարդ խնդիրները հանգուցալուծելու հարցերը<sup>19</sup>:

Ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դիվանագիտության մեջ բանակցությունների գործընթացում մեծապես կարևորվում է բանակցողի արհեստավարժությունը, քննարկման առարկայի իմացությունը և դրանում խորամուխ լինելու հատկությունը: Այս իմաստով, մեկնաբանելով Պլատոնի «Ֆեդոնը», Դավիթ Անհաղթը հատկապես նշում է, որ եթե որևէ մեկը ցանկանում է ճշմարիտ խորհել, մտածել, նա պետք է ընկալի առարկայի բնույթը, այսինքն՝ դրա սահմանումը. «Եթէ կամի ոք յաղագս իրի ուրուք ճշմարտաբար խորհել և մտածել, պարտ է նախ դիտել զնորին իրի բնութիւնն, այսինքն զսահմանն»<sup>20</sup>: Ակնհայտ է, որ նման մեկնաբանման համաձայն, սահմանումը բացահայտում է առարկայի էությունը: Միաժամանակ, եթե որևէ մեկը չգիտե առարկայի սահմանումը, չգիտե նաև, թե ինչ է բխում այդ առարկայից, «Քանզի որ ոչն գիտէ զսահմանն, վրիպէ յայնցանեացն ամենեցունց, որք հետևինքն բնաւորեցան նորին իրի...»: Դավիթ Անհաղթի այս կարծիքից պարզ է դառնում, թե ինչու իր հիմնական աշխատությունը, որտեղ մեկնաբանում է փիլիսոփայության էությունը, բնույթը, նշանակությունը, տեղն ու դերը մարդկանց կյանքում, հեղինակը խորագրել է ոչ այլ կերպ, քան «Սահմանք իմաստասիրութեան»: Ինչպես փիլիսոփայության, այնպես էլ ամեն մի երևույթի կամ, Դավիթ Անհաղթի խոսքերով ասած, «ամենայն իրողութեան» սահմանումը պետք է պատասխանի հետևյալ չորս հարցերին. «Եթէ է, և զի՞նչ է, և որպիսի՞ ինչ է, և վասն է՞ր է»<sup>21</sup>:

<sup>18</sup> Տե՛ս **Դավիթ Անյաղթ**, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը եւ առաջաբանը՝ Ս. Արեւշատյանի, Եր., 1980: Միջնադարյան ավանդությունը Դավթին է վերագրել նաև Պորփյուրի «Ներածության», Արիստոտելի «Կատեգորիաների» և «Յաղագս մեկնութեան», Արիստոտելին վերագրվող «Յաղագս աշխարհի» և «Յաղագս առաքինութեան» երկերի թարգմանությունն ու «Ի սուրբ խաչ աստուածընկալ» ճառը, «Առածք հինգ Դաւթի» և «Վասն բաժանման» մանր գրվածքները: Այս ավանդությունն արտացոլվել է Դավթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ Թուղթ Գիտայ առ Դաւիթ, ի Վենետիկ, 1932, հրատարակության մեջ, որը կրկնությունն է Կորին վարդապետի, Մամբրէ Վերձանողի եւ Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, հրատարակության:

<sup>19</sup> Տե՛ս **Արեւշատյան Ս.**, Դավիթ Անհաղթը Հին Հայաստանի ակնաւոր փիլիսոփա, Եր., 1980, էջ 15-26: **Բրուտյան Գ.**, Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին, Եր., 1980, էջ 74:

<sup>20</sup> **Դաւիթ Անյաղթ**, Սահմանք իմաստասիրութեան, Համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս. Արեւշատյանի, Եր., 1960, էջ 22:

<sup>21</sup> **Բրուտյան Գ.**, Դավիթ Անհաղթի ուսմունքը սահմանման և բաժանման մասին, Պատմաբանասիրական հանդես, 4, 1979, էջ 3-13:

Մեծ մտածողն առանձնահատուկ ուշադրության է արժանացրել հատկապես գիտելիքն ու դրանով պայմանավորված՝ մարդու իմացական կերպարը, իմաստասիրությունն ու կրթությունը: Մտավոր կարողության հանդեպ նրա վերաբերմունքը կարելի է վստահաբար համեմատել տնտեսական դիվանագիտության այն ընկալման հետ, որն անվանում են «փափուկ ուժ» (soft power): Հետևաբար՝ «փափուկ ուժը» սնուցող կարևորագույն աղբյուրը Դավիթ Անհաղթը համարել է գիտությունը և նրա տարբեր ճյուղերը՝ տնտեսության վրա իրենց որոշիչ ներգործությամբ: Այս առումով կարևորվում է «արդյունավետություն» եզրույթը, որը, Դ. Անհաղթի ընկալմամբ, ենթադրում է հասարակության կողմից սահմանափակ ռեսուրսների օգտագործումից ստացվող առավելագույն բարիքները, իսկ «արդարությունը» նշանակում է, որ ստացված բարիքները բաժանվում են հասարակության բոլոր անդամների միջև<sup>22</sup>: Այլ խոսքով՝ արդյունավետությունը տնտեսական «կարկանդակ» է, իսկ արդարությունն այն մասերի բաժանելու միջոց: «Արդարություն» եզրույթն Անհաղթը կապում էր եկամտի, ունեցվածքի և հողերի արդար բաժանման հետ: Իսկ ժամանակակից տնտեսական դիվանագիտության մեջ արդյունավետությունն ու արդարությունը հակասության մեջ են մտնում՝ որքան մեծ է «կարկանդակը», այնքան քիչ է արդարությունը, և հակառակը՝ որքան արդար է բաժանված, այնքան քիչ է «կարկանդակը»: Դեռևս Վոլտերն էր հիշեցնում, որ մենք վաղուց չենք ապրում այն ոսկեդարում, երբ մարդիկ ծնվում էին հավասար և հավասար բաժին ստանում բերրի հողերի հյութալի պտուղներից: Մարդիկ միանգամայն տարբերվում են իրարից՝ աշխատասիրությամբ, ակտիվությամբ, ընդունակություններով, կրթությամբ, եկամուտը գրագետ տնօրինելու ունակությամբ: Հետևաբար՝ նրանք չեն կարող աշխատել, վաստակել և ապրել միանման: Սրանից էլ կարող ենք եզրակացնել, որ ճիշտ չի լինի, եթե հասարակության բոլոր անդամները «կարկանդակից» հավասար բաժին ստանան: Յուրաքանչյուրը պետք է ստանա այնքան, որքան արժանի է ստանալու:

Դավիթ Անհաղթը համարում էր, որ մարդը պետք է օգնի մյուսներին, այլ ոչ թե գործի մեկուսացած: Նա կարծում էր, որ յուրաքանչյուր մարդ կարող է երջանիկ լինել միայն այն դեպքում, երբ արդարացի է<sup>23</sup>: Նրա կայացման մեջ մեծ դեր է խաղացել Ալեքսանդրիայի Օլիմպիոդորոս Կրտսերի փիլիսոփայական դպրոցը<sup>24</sup>, որտեղ և տիրապետել է հանրային հարաբերությունների, դիվանագիտության և բանակցությունների արվեստին, ինչը թույլ է տվել դասավանդել նույն կրթօջախում<sup>25</sup>:

<sup>22</sup> Barnes, textes réunis et édites par Valentina Calzolari et Jonathan (2009). L'œuvre de David l'Invincible et la transmission de la pensée grecque dans la tradition arménienne et syriaque.

Leiden: Brill, էջ 23-27, Retrieved 1, February, 2013:

<sup>23</sup> Տե՛ս Topchyan A. (ed.), David the Invincible, Commentary on Aristotle's Prior Analytics. Old Armenian Text with an English Translation, Introduction and Notes (CAA. Davidis Opera 2), Leyde - Boston: Brill, 2010 (Philosophia Antiqua), էջ 122-123:

<sup>24</sup> Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան (ժողովածու), Եր., 1983, էջ 114-135:

<sup>25</sup> Ալեքսանդրիայի Օլիմպիոդորոս Կրտսերի փիլիսոփայական դպրոցը լայնորեն կիրառում էր էպիկուրոսի մեթոդները՝ թույլ տալով, որ առավել աչքի ընկնողներն ուսանելուց գատ նաև դասավանդեն կրթօջախում:

Տարբեր ժամանակների տվյալների բացահայտման և տնտեսական երևույթների վերլուծության ու բանակցությունների մեջ Դավիթ Անհաղթն ուշադրություն է դարձրել փաստացի տվյալների օգտագործման կարևորությանը: Ըստ էության, կարելի է ենթադրել, որ Դավիթ Անհաղթն առաջինն է խոսել վիճակագրության մասին և հիմնադրել է հին հայկական փիլիսոփայության աշխարհիկ ուղղությունը<sup>26</sup>:

Տնտեսական դիվանագիտությունը, մեր համոզմամբ, ենթադրում է երկրի անվտանգության ապահովմանն ու տնտեսության մրցունակության բարձրացմանը միտված ինչպես գործնական քայլերի իրականացում, այնպես էլ հիշյալ նպատակներին միտված արդյունավետ բանակցությունների համար անհրաժեշտ ներուժի ձևավորում և իրացում: Հենց այս նպատակներն է հետապնդել 11-րդ դարում Հայաստանի հասարակական և քաղաքական, պետական կյանքում կարևոր դերակատարություն ունեցած Գրիգոր Մագիստրոսը: Նա իր կյանքի հասուն տարիներին մասնակից է դառնում 1045 թ. Անիի դրամատիկ իրադարձություններին, որից հետո նպատակ է դնում երկիրը հզորացնել ինչպես ավանդական՝ ռազմական ճանապարհով, այնպես էլ օգտագործելով դիվանագիտական, մասնավորապես՝ հոգևոր, մշակութային և տնտեսական դիվանագիտության տարբեր հնարավորություններ:

Գ. Մագիստրոսը սպարապետ Վասակ Պահլավունու որդին էր և հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու ու նրա կուսակիցների հետ պայքարել է ներքին և արտաքին թշնամիների դեմ, միաժամանակ՝ դիվանագիտական բոլոր հնարավոր միջոցներով վնասագերծել երկրի դեմ ծրագրվող բազմաթիվ վտանգավոր ասպատակություններ և նպաստել Բագրատունիների գահի ամրապնդմանը: Նա բազմանդամ ընտանիքի հայր էր, գերդաստանի մեծերից մեկը՝ Վահրամ Պահլավունուց հետո: Գ. Մագիստրոսը ջանադրաբար զբաղվում էր նաև իր երեխաների դաստիարակությամբ, որոնք ութն էին՝ չորս որդի և չորս դուստր: Նրա որդիները դարձան ժամանակի նշանավոր քաղաքական և կրոնական գործիչներ:

Իր հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու հետ միասին բանակցել է բյուզանդացիների հետ և օգնել է Գագիկ Բ թագավորին՝ պահպանելու Բագրատունիների թագավորությունը: Անիի թագավորությունը պահպանելու նպատակով Գ. Մագիստրոսը դարձյալ օգտագործում է իր դիվանագիտական հնարավորությունները և կապերը՝ 1045 թ. մասնակցելով Կոստանդնուպոլսում Կոստանդին կայսեր հետ Գագիկ Բ-ի վարած բանակցություններին: Կանխազգալով հայկական թագավորության անկումը՝ իր տիրույթները հանձնել է Բյուզանդիային, փոխարենը կարողացել է կալվածքներ, հողեր և գյուղեր ստանալ Հարավային Հայաստանում և Միջագետքում: Բյուզանդիայի կայսրը նրան տվել է Մագիստրոսի պալատական և ռազմական բարձր տիտղոս, իսկ 1048 թ. ստացել է Հարավային Հայաստանի և Միջագետքի կուսակալի (նահանգապետի) պաշտոնը: Հատկանշական է, որ Գ. Մագիստրոսի կուսակալության սահմաններում էին ոչ միայն Միջագետքը, ինչը կարևոր ռազմավարական նշանակություն ուներ, այլև Վասպուրականը, Տարո-

<sup>26</sup> Տե՛ս Muradyan G. (ed.), *David the Invincible Commentary on Porphyry's Isagoge*. Old Armenian Text with an English Translation, Introduction and Notes (CAA. Davidis Opera 3), Leyde - Boston: Brill, 2014 (Philosophia Antiqua), էջ 137:



նը և Հայաստանի հարավարևմտյան շատ մարզեր, ինչպես նաև արևելյան սահմանները, որոնք նա պաշտպանել է թուրք-սելջուկներից և հիշյալ տարածքներում ծավալուն շինարարական և վերականգնողական աշխատանքներ ծավալել<sup>27</sup>: Դիվանագիտական, այդ թվում՝ տնտեսական դիվանագիտության արվեստին տիրապետելով, Գ. Մագիստրոսին հաջողվել է համատեղել Բյուզանդիայի պետության կողմից իրեն վստահված բարձր պաշտոնը Հայաստանի պաշտպանության և զարգացման գործի հետ: Մագիստրոսի վաստակը հնում առաջին հերթին գնահատվել է այն հանգամանքով, որ Հայաստանում և արտերկրում նրան ճանաչել են իբրև ռազմական գործիչ, դիվանագետ, գիտնական և մանկավարժ: Կրթությունն ստացել է Անիի դպրոցում, այնուհետև՝ Կոստանդնուպոլսում:

Իրականում, Գ. Մագիստրոսը պահանջում էր գիտությամբ հասնել կատարյալին: Իսկ այդ կատարյալը մարմնավորված է Աստոծո էության մեջ: Նա այն համոզմունքն ուներ, որ սեփական մշակույթը պետք է հարստացվի և հագեցվի նաև հարևան և այլ ժողովուրդների մշակույթներին ծանոթանալով: Դրա համար պետք է թարգմանել նրանց ունեցած արժեքավոր՝ եղածին ավելացնելով սեփականը: «Քանզի մեր ոչ է սովորութիւն գողաբար զայլոցն իմաստասիրութիւն խորթս մեզ ստեղծանել»<sup>28</sup>:

Ակնհայտ է, որ Մագիստրոսը ոգեշնչվել է Տիրոջ կերպարով: Նրա համար Հիսուսը կենդանի և գործող գոյ է, որի էությունից ամեն խզում նահանջ է դեպի անխուսափելի մահ ու աղետալի կործանում: Նա օգնում է մարդկանց, քանի որ գթում է նրանց, զգում նրանց ծանր կացությունը, սակայն փոխարենը ոչ մի հատուցում չի պահանջում:

Գաղտնիք չէ, որ հասարակական գիտությունների, այդ թվում՝ քաղաքագիտության, դիվանագիտության և հատկապես տնտեսական դիվանագիտության մեջ մեծ ուշադրություն է դարձվում ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքին: Վերջինս կարող է համոզիչ լինել բանակցող մյուս կողմի համար այնքանով, որքանով հիմնավոր են բերվող փաստարկները, հարուստ է խոսքը, պատկերավոր են մեջբերվող օրինակները, իսկ երբեմն՝ դիպուկ այլաբանությունն ու առակախոսությունը: Պակաս կարևոր չէ տնտեսական դիվանագիտության մեջ նաև հռետորական արվեստը ոչ միայն լայն զանգվածների, այլև բանակցելու արվեստը և զրուցակցին սեփական համոզմունքը նրբանկատորեն փոխանցելու առումներով, ինչը նաև որոշակի հոգեբանական, մանկավարժական ծիրք է պահանջում: Այս առումով, պատմական Հայաստանի տնտեսական դիվանագիտության ձևավորման մեջ բացառիկ դեր է խաղացել հայ մեծ գիտնական, օրենսդիր, առակագիր, մանկավարժ, հասարակական գործիչ Մխիթար Գոշը, ում վաստակը մեծ է եղել նաև հարևան երկրների, հետագայում՝ եվրոպական շատ երկրների օրենսդրական դաշտի կարգավորման, այդ թվում՝ տնտեսական օրենքների մշակման և կիրարկման գործում: Նրա ներդրած կանոնները վերածվել են միջազգային իրավական նորմերի, որոնք առ այսօր լայնորեն կիրառվում են նաև տնտեսական դիվանագիտության մեջ:

<sup>27</sup> Տե՛ս **Մուրադյան Գ.**, նշվ. աշխ., էջ 5-44:

<sup>28</sup> Գրիգոր Մագիստրոսի Թուրք եւ չափաբերականք, Մատենագիրք հայոց, ԺԶ հատոր, ԺԱ դար, Եր., 2012, էջ 115:

Մ. Գոշի ժամանակներում իր պետականությունը կորցրած հայ ժողովրդի համար ստեղծվել էին վերականգնման որոշ նախադրյալներ: Ահա այս պայմաններում էր, որ մեծ հայրենասերը ձեռնարկում է «Դատաստանագրքի» ստեղծումը, որի նպատակը պետք է լիներ բարձրացնել հայ ժողովրդի ազգային-ազատագրական ոգին, երկրի ներսում ապահովել արդարադատությունն ու խաղաղությունը՝ դրանով իսկ բոլոր ուժերը միավորել անկախություն ձեռք բերելու և հայկական կենտրոնացված թագավորությունը վերականգնելու համար:

Տնտեսական դիվանագիտության մեջ առանցքային համարվող՝ ժողովուրդների և մարդկանց հավասարության գաղափարը Գոշն ամրապնդեց օրենքով և բոլոր խավերի համար սահմանեց հավասար պատիժ: Նա կարծում էր, որ հատուցումն ու պատիժը պետք է համապատասխանեն հասցված վնասին: Սա առաջադիմական սկզբունք էր. չէ՞ որ այն ժամանակ ամենափոքր իսկ զանցանքի համար մարդուն կարող էին նույնիսկ մահապատժի ենթարկել: Իր «Դատաստանագրքով» Մ. Գոշը հանդես էր գալիս որպես մեծ մարդասեր: Դարեր շարունակ դա իբրև օրենսգիրք է գործածվել ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ հայկական բազմաթիվ գաղթավայրերում:

«Գիրք դատաստանին» նաև թարգմանվել է մի շարք օտար լեզուներով, այդ թվում՝ անգլերեն, իսպաներեն, լեհերեն, ռուսերեն և այլն: «Դատաստանագրքի» իրավական հիմնադրույթները մեծ տարածում գտան հատկապես Լեհաստանում և դրա գաղթօջախներում, մասնավորապես՝ Լեհաստանին պատկանող ուկրաինական տարածքներում (Կիևում և Արևելյան Ուկրաինայում), որտեղ հայերը հաստատվել էին դեռևս XI–XII դդ.՝ գաղթելով մոնղոլների արշավանքների պատճառով: Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո գաղթականների նոր ալիք է ուղղվում դեպի այդ երկրներ: Հայկական գաղթօջախներ են առաջանում Լվովում, Կամենեց-Պոդոլսկում և այլ վայրերում: Հայ համայնքները ստանում են դավանանքի ազատություն և տնտեսական ազատ գործունեության իրավունք: Դատավարությունը տարվում էր սեփական օրենքներով, լեհահայերի դատաստանագրքով, որը կազմված էր Մ.Գոշի մշակած օրենսդրական դրույթների հիման վրա<sup>29</sup>: Այդ դարաշրջանում, ինչպես հայտնի է, դիվանագիտությամբ, այդ թվում տնտեսական դիվանագիտությամբ, կարող էին զբաղվել հիմնականում թագավորները, իշխաններն ու զորավարները: Հետևաբար՝ տնտեսական դիվանագիտությունն ուներ ավելի սահմանափակ ըմբռնում՝ այլ երկրներից ստացվող հարկերի, ավարների և դրանց ճիշտ բաշխման վերաբերյալ: «Ջորքերն ու իշխանները, եթե թշնամիների մեջ արքայի հրամանով ավարելու ելնեն, ան-

<sup>29</sup> Հայկական համայնքների մեջ մեծ էր հատկապես Լվովի գաղթօջախի նշանակությունը: XIV–XVII դդ. Լվովը լեհահայերի հոգևոր և վարչական կենտրոնն էր: Հայկական մյուս գաղութները հաճախ դիմում էին Լվովի հայոց դատարանին: Հայերն ակտիվ մասնակցում էին երկրամասի ներքին և միջազգային առևտրին: Նրանք արևելյան երկրներից ներմուծում էին գորգեր, կերպաներ, չոր միրգ, համեմունք և այլ ապրանքներ: Հունգարիայից, Մոլդովայից բերում էին խոշոր եղջերավոր անասուններ, ձիեր: Հայերն ակտիվորեն մասնակցում էին նաև երկրի քաղաքական կյանքին: Նրանք դիվանագիտական կարևոր ծառայություններ էին կատարում, մասնակցում էին թուրքական նվաճումների դեմ մղվող պայքարին: Վիեննայի ճակատամարտում (1683 թ.), որտեղ թուրքերը գլխավին ջախջախվեցին, լեհական բանակում կովում էին նաև հինգ հազար հայեր (տե՛ս **Чухлиб Т.**, Вена, 1683: Украина-Русь в битве за «золотое яблоко» Европы. Киев: Клио, 2013):

կասկած, ըստ պատահման ավարի, ապա ավարի և գերիների կեսն արքայինը լինի, իսկ կեսը՝ զորքերինը: Սակայն եթե առանց արքայի հրամանի երթան և ավարեն, ապա երկու բաժինը գնացողինը լինի, որովհետև իրենց կամքով ի մահ գնացին: Այս, ըստ սովորույթների ենք ասում և ոչ գրվածքների հրամանով, որովհետև, երբ պատերազմի մեջ զորականը մեռնում է, անպարտ է նրան պատերազմի առաքողը: Իսկ եթե գողին առաքեն ավարի և սա մեռնի, ապա արյան պարտապանը առաքողը լինի: Իսկ եթե գողն իր կամքով, որպես թե ավարի՝ գնա գողության և մեռնի, նրա արյունը նրա գլխին մնա: Եվ եթե արքան կամ իշխանը որևէ մեկին ուղարկեն եւ սա բռնվի, ապա նրան փրկագնի նա, ով նրան ուղարկեց: Իսկ եթե իր կամքով, առանց հրամանի է գնացել ու բռնվել, ապա ինքն էլ իրեն թող փրկագնի: Չորականը եթե պատերազմի ժամանակ որևէ մեկին բռնի, ապա գերյալի զգեստը, զենքը եւ ձին՝ նրանը լինի, իսկ գրահը՝ թագավորինը»<sup>30</sup>: «Ոսկի, ակունք և կերպաս՝ ամենայն ձև ու տեսակներով, որ ավար է առնվել, թագավորների բաժինն է, իսկ արծաթն ու մարգարիտը՝ իշխանների, նույնն և ասրեղենը պատվական, իսկ անարգ ասրեղենը և՛ կտավը, և՛ պղինձը, և՛ երկաթը, և՛ այլ այսպիսի բաները՝ զորքերինը լինեն»<sup>31</sup>:

Հատկանշական է, որ Մ. Գոշի մշակած դրույթները կիրառվել են նաև այլ երկրների տնտեսական դիվանագիտության ասպարեզում: «Եվ արդ, այսպես լինի: Անդաստաններից հինգերորդ մասն առնեն, որպես որ օրենսդրվեց Եգիպտոսի համար, որ մինչեւ այսօր կոչվում է հնգյակ, որովհետեւ այն ժամանակ, երբ փարավոնի երկիրը պտուղ տվեց, այդժամ էլ հինգերորդականը կարգվեց: Հայտնի է, որ առաջ հնգյակ չէր, այլ՝ Հայրենի կտուր եւ հաշվով արծաթ սակավ ունեին: Նույնպես եւ այժմ լինի, որովհետեւ արծաթագին անդաստանից, եւ այգուց եւ դրախտից, սրանցից հնգյակ չեն առնում, նմանապես եւ ջրաղացներից եւ տներից եւ խանութներից: Այլ, եթե բնակիչները արվեստավորներ են, իրավամբ այն լինի, որ ինչ պարտավոր են, այդքանը տան: Սակայն գլխահարկը քրիստոնյաների համար չէ, այլ՝ միայն այլազգիների»<sup>32</sup>:

Դիվանագիտության մեջ հաճախ կիրառվող այլաբանության ու առակախոսության տեսանկյունից հատկապես կարևորվում են Մխիթար Գոշի առակները: Ժողովածուն բաղկացած է 19 առակից, որոնց հերոսները ներկայացվում են երկնային մարմինների, երկրի, ծառերի, խոտերի, ծաղիկների, լեռների, գետերի, կենդանիների, թռչունների, մարդկանց տեսքով:

21-րդ դարում չդադարող զինված հակամարտությունների պայմաններում դարձյալ կարևորվում է Գոշի ստեղծագործական ժառանգությունը: Նա արդարացի էր համարում միայն այն պատերազմը, որը մղվում է օտարի հարձակումից հայրենիքն ու հարազատ ժողովրդին պաշտպանելու նպատակով<sup>33</sup>: Մխիթար Գոշի գրչին են պատկանում մատենագրության զանազան ճյուղերին վերաբերող մոտ մեկ տասնյակ աշխատություններ:

<sup>30</sup> Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Եր., 2001, էջ 40-41:

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 36-37:

<sup>33</sup> Տե՛ս Ghazinyan G., Contemporary and Historical Issues of Criminal Procedure in Armenia. Yerevan, 2001, էջ 24:

Տնտեսագետներին հետաքրքիր կլինի իմանալ, որ Հովհաննես Երզնկացու (1230-1294) աշխատություններում կան որոշակի կանոններ և ուղղություններ, օրինաչափություններ, որոնք կարևորում են տարբեր մարդկանց հարգանքով վերաբերվելը և նրանցից սովորելը՝ անկախ վերջիններիս ազգային պատկանելությունից, թեև միջնադարում եկեղեցու ներկայացուցիչները մարդկանց սրտերում արթնացնում էին թշնամանք այլ հավատքի և ազգությունների հանդեպ<sup>34</sup>: Սա է պատճառը, որ կրոնն ու ծայրահեղացված ազգայնականությունը առաջացրել են սուր խնդիրներ միջին դարերում, բայց Հայաստանում առավելություն էր այն, որ գրողները և հասարակական գործիչներն իրենց մտքերով, խոսքով և աշխատություններով կրոնական հանդուրժողականություն էին քարոզում տարբեր ազգային ներկայացուցիչների հանդեպ, ինչպես նաև հավասար իրավունքներ բոլորի համար<sup>35</sup>: Մասնավորապես՝ Հովհաննես Երզնկացու աշխատություններից մեկում ներկայացված է, որ կրոնական և ազգային պատկանելությունը չի կարող պատնեշ լինել մարդկային հարաբերությունների համար: Հենց այս համոզմունքն էլ այլ պետությունների ներկայացուցիչների հետ ազատ հարաբերվելու և բանակցելու, փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում առևտրային և տնտեսական կապեր ձևավորելու հիմք է հանդիսանում<sup>36</sup>:

**Եզրակացություն:** Ի մի բերելով պատմական Հայաստանի ականավոր մտածողների դերը տնտեսական դիվանագիտության և դրա առանձին հիմնադրույթների ձևավորման գործում՝ կարելի է հանգել հետևյալ հիմնական եզրահանգումների:

Դավիթ Անհաղթի համոզմամբ՝ կարևոր են գիտության տարբեր ճյուղերը՝ տնտեսության վրա իրենց որոշակի ազդեցությամբ: Նա կարծում էր, որ բնական և հասարակական գիտությունների համակարգում հատուկ տեղ ունեն մարդակենտրոն տնտեսական գիտությունը, մարդկանց հասարակական հարաբերություններն ու հետաքրքրությունները:

Ինչպես և մյուս հայ դասականները, Գրիգոր Մագիստրոսն էլ գնացել է դեպի ազգային և համաշխարհային մշակույթի ակունքները՝ հայ կյանքում վերահաստատելով անտիկ ավանդները: Նա հիացած էր Հոմերոսի հանճարով և հայ ընթերցողի համար վերծանել է Պլատոնի և Արիստոտելի երկերը, որոնցում ի հայտ են գալիս անտիկ ու աստվածաշնչյան այնպիսի կերպարներ, որոնք պայքարում են մարդկային առաքինությունների և բարձր արժեքների տարածման համար:

Տնտեսական դիվանագիտության մեջ կենսական դեր ունեցող ժողովուրդների և մարդկանց հավասարության սկզբունքը Մ. Գոշը շարադրել

<sup>34</sup> Տե՛ս Encyclopedia Americana. Americana Corporation, 1965. vol. 2, էջ 270: The Armenian Renaissance reached its height in this period, with the works of the Vardapet Hovhannes (John) Sarkawag (d. 1129), ... Hetum, author of Narratives of the Tatars and Chronological Tables; Hovhan Erzenkatsi (John of Erzincan), moralist, theologian, poet, and grammarian; Nerses Lambronatsi (Nerses of Lambron, 1153-1198), theologian, moralist, and orator:

<sup>35</sup> Տե՛ս Hacikyan A., Basmajian G., Franchuk E., Ouzounian N. eds. The Heritage of Armenian Literature volume II: From the sixth to the eighteenth century. Detroit: Wayne State University Press, 2002, էջ 516–523:

<sup>36</sup> Տե՛ս Cushman S., Cavanagh C., Ramazani J., Rouzer P., The Princeton Encyclopedia of Poetry and Poetics: Fourth Edition. 4. Princeton University Press, 2012, էջ 83:

իրավական հիմնադրույթով՝ դրանում կարևորելով պատժի ինստիտուտը, միաժամանակ շեշտելով հատուցման համարժեքությունը պատժին: Հիշյալ և այլ հիմնադրույթներն այնքան ընդունելի են մարդասիրության և արդարամտության տեսանկյուններից, որ նրա հեղինակած «Դատաստանագիրքն» արագ տարածվեց ոչ միայն հայրենիքում, այլև եվրոպական երկրներում և աշխարհասփյուռ հայ համայնքներում:

Տնտեսագիտական դիվանագիտության առումով արժեքավոր են Հովհաննես Երզնկացու կողմից մշակված բազմաթիվ հիմնադրույթներ, որոնք սերմանում են հարգալից մոտեցում մարդկանց հանդեպ՝ անկախ էթնիկ, ռասայական կամ այլ ծագումից, ինչը թույլ է տալիս հավասար և անկաշկանդ հարաբերություններ զարգացնելու ամենատարբեր ազգերի, երկրների, կրոնական, մշակութային կառույցների հետ՝ փոխվստահության ընդհանուր նպատակներով ու տնտեսական շահերի հիմքով:

### Օգտագործված գրականություն

1. Արևշատյան Ա., Դավիթ Անհաղթը Հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Եր., 1980:
2. Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դարերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 1996:
3. Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, հատոր առաջին, Եր., 2002:
4. Բրուտյան Գ., Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին, Եր., 1980:
5. Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան (ժողովածու), Եր., 1983:
6. Գրիգոր Մագիստրոսի Մեկնութիւն քերականին, Մատենագիրք հայոց, ԺԶ հատոր, ԺԱ դար, Եր., 2012:
7. Զաքարյան Ա., Հայ իմաստասերներ (Վահրամ Բաբունի, Հովհաննես Պլուզ Երզնկացի), Եր., 1997:
8. Զաքարյան Ա., Հովհաննես Պլուզ Երզնկացին իշխանության և կառավարման մասին, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», № 1 (19), 2016:
9. Հովհաննես Երզնկացի, Մատենագրություն, Եր., 2013:
10. Մաթևոսյան Կ., Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր., Մուղնի, 2015:
11. Միքայելյան Ա., Մարդումյան Մ., Մտքի հրավառություն, «Ձանգակ-97», 2002:
12. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, թարգմ.՝ Մաքսիմ Ոսկանյանի, Եր., 2001:
13. Երզնկացի Յովհաննէս, Ճառեր եւ քարոզներ / Յ. Երզնկացի, աշխատասիրությամբ՝ Է. Բաղդասարյանի, Եր., 2013:
14. Մուրադյան Գ., Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը և կյանքը, «Բանբեր Մատենադարանի», հ. 20, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստ., Եր., «Նաիրի» հրատ., 2014:
15. Սրապյան Ա., Հովհաննես Երզնկացի: Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Եր., ԵՊՀ հրատ., 1976:
16. Армянский судебник Мхитара Гоша (перевод А. Паповяна), Изд-во Академии наук Армянской ССР, 1954.

17. Кыпчакско-польская версия Армянского Судебника и Армяно-кыпчакский Процессуальный кодекс 1519-1594 гг./ составители Гаркавец А., Сапаргалиев Г., Алматы: Дешт-и-Кыпчак, Баур, 2003.
18. Чалоян В., Философия Давида Непобедимого, Ер., 1946.
19. Аквинский Ф., О правлении государей / Политические структуры эпохи феодализма в Западной Европе VI-XVII вв., Л., 1990.
20. Bayne N., Woolcock S., The new economic diplomacy: decision-making and ne-gotiations in International Economic Relations, Ashgate Publishing Limited, 2007.
21. Berridge G., Diplomacy: theory and practice, Palgrave Macmillan, 2002.
22. Carron de la Carrière G., La diplomatie économique. Le diplomate et le marché, Economica, Paris, 1998.
23. Conceptualizing Economic Diplomacy: The Crossroads of International Relations, Economics, IPE and Diplomatic Studies Maaik Okano-Heijmans Netherlands Institute for International Relations Clingendael, The Hague, 9 September 2010; revised: 16 February 2011; accepted: 17 February 2011.
24. Copleston F. C. Aquinas, An Introduction to the Life and Work of the Great Medieval Thinker. London, 1955.
25. Cushman S., Cavanagh C., Ramazani J., Rouzer P., The Princeton Encyclopedia of Poetry and Poetics: Fourth Edition. 4. Princeton University Press, 2012. Dowsett C.J.F., The Albanian Chronicle of **Maxit'ar Goš**, - Bulletin of the School of Oriental and African Studies / Volume 21 / Issue 03 / October 1958.
26. Davtyan S., Khachatryan M., Johrian A., Ghazaryan K., Mkhitar Gosh's Medieval Lawcode And its Implications for Armenian Communities Abroad. Med Law. 33(2), 2014.
27. Encyclopedia Americana. Americana Corporation, 1965. vol. 2.: The Armenian Renaissance reached its height in this period, with the works of the Vardapet Hovhannes (John) Sarkawag (d. 1129).
28. Ghazinyan G., Contemporary and Historical Issues of Criminal Procedure in Armenia. Yerevan, 2001.
29. Hacikyan A., Basmajian G., Franchuk E., Ouzounian N. eds., The Heritage of Armenian Literature volume II: From the sixth to the eighteenth century. Detroit: Wayne State University Press, 2002.
30. Hacikyan A., The Heritage of Armenian Literature. Detroit: Wayne State Univ. Press, 2000.
31. Melissen J. (ed.), Innovation in Diplomatic Practice, Macmillian, London, 1999. Momaya K., Evaluating International Competitiveness at the Industry Level, Vi-kalpa, vol. 23, no. 2, 1998.
32. Mkhitar Gōsh, The Lawcode (Datastanagirk) of Mxit'ar Goš, Translated by Robert W. Thomson, Rodopi, 2000.
33. Mkhitar Gosh's Fables. Transl. R. Bedrosian, 2002. Mkhitar Gosh's Colophon or The Aghuanian Chronicle, Transl. R. Bedrosian, 2007.
34. Muradyan G. (ed.): David the Invincible: Commentary on Porphyry's Isagoge, Leiden, 2015.
35. Goff Sarah C., Fair trade: global problems and individual responsibilities, Critical Review of International Social and Political Philosophy, Vol. 21, Issue 4, 2016.

36. Muradyan G. (ed.), *David the Invincible Commentary on Porphyry's Isagoge. Old Armenian Text with an English Translation, Introduction and Notes* (CAA. Davidis Opera 3), Leyde - Boston: Brill, 2014 (Philosophia Antiqua). Odell J., 2000, *Negotiating the World Economy*, Cornell University Press.
37. Olins W., *Trading Identities: Why Countries and Companies are Taking on Each Others' Roles*, Foreign Policy Centre, London, 1999.
38. Putnam R., *Diplomacy and Domestic Politics: The Logic of Two-Level Games*, "International Organization", vol. 42, no. 3, 1988.
39. Saner R., Yiu L., *International Economic Diplomacy: Mutations in Post-modern Times*, Netherlands Institute of International Relations Clingendael. 2007.
40. Sanjian A., Terian A., *An Enigmatic Letter of Grigor Magistros*, Journal of The Society of The Armenian Studies, 2, 1985-1986.
41. *The Scientific Heritage of Mkhitar Gosh. History and Modernity* (collection of conference materials in Armenian) ed. board. Yerevan, Eurasia International University, 2014.
42. Topchyan A. (ed.), *David the Invincible, Commentary on Aristotle's Prior Analytics. Old Armenian Text with an English Translation, Introduction and Notes* (CAA. Davidis Opera 2), Leyde - Boston: Brill, 2010.
43. Virabyan N., Margaryan L., *Mkhitar Gosh: Armenian Classics series*, RA National Institute of Education, Yerevan, Edit Print, 2010.

## ТАТУЛ МАНАСЕРЯН

*Доктор экономических наук, профессор*

***Научные наблюдения некоторых терминов экономической дипломатии в трудах армянских мыслителей.*** – В современном мире возрастает роль экономической дипломатии. Независимо от того, насколько мы понимаем ее значение, насколько хорошо мы понимаем ее суть и, наконец, насколько хорошо мы владеем ее инструментами, экономическая дипломатия присутствует почти везде, от местной среды вокруг нас до глобальной экономики. Хотя экономическая дипломатия воспринимается как инструмент развития внешнеэкономических связей страны, тем не менее она играет определенную роль внутри страны, согласованная с международными организациями, экономическими атташе иностранных посольств, иностранными компаниями, инвесторами в нашей стране, а также для стимулирования экспорта продукции местных компаний. Основная цель экономической дипломатии как на внешней арене, так и внутри страны состоит в повышении конкурентоспособности экономики страны и ее надлежащего представительства на местном и внешнем рынках. Выдающиеся мыслители исторической Армении своим жизненным опытом и творчеством внесли ощу-

тимый вклад в разработку принципов этого всеобъемлющего искусства как в свое время, так и в нынешних межгосударственных отношениях, в частности, в многогранность экономической дипломатии. Оставленное ими литературное наследие помогло наладить и развить эффективные экономические, правовые и политические связи между разными народами. Поэтому изучение исторической эволюции экономической дипломатии может способствовать более полному пониманию процессов в мировой экономике, формированию трезвой оценки ситуации, а также установлению взаимовыгодных отношений.

**Ключевые слова:** *экономическая дипломатия, историческая Армения, Давид Анахт, Григор Магистрос, Мхитар Гош, Ованес Ерзнкаци.*

JEL: B31, N01

DOI: 10.52174/1829-0280\_2021\_2\_166

TATUL MANASERYAN

*Doctor of Economics, Professor*

*Observations of Some Terms of Economic Diplomacy in the Works of Armenian Thinkers.*– The role of economic diplomacy is growing in the modern world. No matter how much we understand its meaning, how well we understand its essence and, finally, how well we know its tools, economic diplomacy is present almost everywhere, from the local environment around us to the global economy. Although economic diplomacy is perceived as a tool for the development of foreign economic relations of the country, it nevertheless plays a certain role within the country, while coordinating economic relations with international organizations, economic attachés of foreign embassies, foreign companies, investors in our country, as well as for stimulating the export of products of local companies. The main goal of economic diplomacy, both in the external arena and within the country, is to increase the competitiveness of the country's economy and its proper representation in the local and foreign markets. Outstanding thinkers of historical Armenia, with their life experience and creativity, have made a tangible contribution to the development of the principles of this all-encompassing art both in their time and in current interstate relations, in particular, in the versatility of economic diplomacy. The literary legacy they left helped to establish and develop effective economic, legal and political ties between different peoples. Therefore, the study of the historical evolution of economic diplomacy can contribute to a more complete understanding of the processes in the world economy, the



formation of a sober assessment of the situation, as well as the establishment of mutually beneficial relations.

*Key words:* economic diplomacy, historical Armenia, David Anhakht, Grigor Magistros, Mkhitar Gosh, Hovhannes Yerznkats.

JEL: B31, N01

DOI: 10.52174/1829-0280\_2021\_2\_166